

Ֆերրարայի ամենաշքեղ պալատներից մեկում, ձմռան մի երեկո, ժամը իննի մոտերքը, դոն Ժուան Բելվիդերոն խնջույք էր տալիս դ՛էստա տոհմից մի իշխանի: Այդ ժամանակաշրջանում, տոնախմբությունը մի հիասքանչ հանդես էր, որ արքայական հարստությունների տեր մարդիկ կամ հզոր վեհապետները միայն կարող էին սարքել: Արվեստի ամենաչքնաղ գլուխգործոցների միջև, մարմարիոնե ձեղնազարդերի տակ, թուրքական թանկագին գորգերի վրա, անուշաբույր մոմերով լուսավորված սեղանի շուրջը յոթ կին էին նստած, և, խնդալից, քաղցրախոսություններ էին ասում: Հագին սնդուսե զգեստներ, ոսկով փողփողուն, պճնված՝ ակնեղեններով, որոնք գուցե նվազ էին փայլում, քան նրանց վառվռուն աչքերը, նրանք, անխտիր, պատմում էին սաստկահույզ կրքերի մասին՝ մեկը մյուսից տարբեր, ինչպես նրանց գեղեցկությունն էր: Նրանք միմյանցից չէին զանազանվում ո՛չ խոսքերով, ո՛չ պատկերացումներով. միայն եղանակը, ինչ-որ հայացք, մի քանի շարժումներ կամ ձայնի շեշտը նրանց խոսքերին տալիս էին շվայտ, պազշոտ, ծաղրական կամ մեղամաղձոտ մեկնաբանություն:

Թվում էր, թե մեկն ասում է.— Իմ գեղեցկությունը կարող է ջերմացնել ծերունիների սառցակալած սիրտը...

Մյուսը.— Ես սիրում եմ մնալ մեկնված՝ բարձիկների վրա, արբեցությամբ մտածելով իմ երկրպագուների մասին:

Մի երրորդը, որը նման տոնախմբություններում սկսնակ էր, շառագունում էր.— Սրտի խորքում խղճի խայթ եմ զգում...— ասում էր նա:— Ես կաթոլիկուհի եմ և վախենում եմ դժոխքից, բայց ձեզ անչափ եմ սիրում..., անչափ և անչափ, որ ձեզ համար ես կարող եմ զոհաբերել հավիտենական կյանքը...

Չորրորդը, դատարկելով մի բաժակ խիռսի գինի, բացականչում էր.— Կեցցե՛ զվարթությունը: Ես նոր կենդանություն եմ առնում յուրաքանչյուր այգաբացին: Անցյալի նկատմամբ մոռացկոտ, նախօրեի նկատմամբ անփույթ, ամեն երեկո ես սպառում եմ մի երջանիկ կյանք, մի կյանք՝ սիրով լի:

Բելվիդերոյի մոտ նստած կինը նրան նայում էր հրատոշոր հայացքով: Նա լուռ էր.— Ես bravo-ներին՝ չէի վստահի իմ սիրածին սպանելու գործը, եթե նա ինձ լքեր:

Հետո նա ծիծաղեց. բայց նրա ջղաձիգ ձեռքը փշրեց հրաշալիորեն քանդակազարդված մի ոսկյա կոնֆետատուփ:

— Ե՞րբ ես դառնալու մեծ դուքս...,— հարցրեց վեցերորդը իշխանին. ինչ-որ չարախինդ և մահասփյուռ արտահայտություն կար նրա ատամներում, և աչքերում՝ բաքոսական խելացնորություն:

* Bravo — վարձու մարդասպան (իտալ):

— Իսկ ե՞րբ է մեռնելու քո հայրը... — վրա տվեց յոթերորդը, խնդալով և ձեռքի ծաղկեփունջը նետելով դոն Ժուանին այնպիսի շարժումով, որի մեջ արբեցնող խղականություն կար:

Դա մի անմեղ մանկամարդ աղջիկ էր, որը սովոր էր խաղ անելու այն ամենի հետ, ինչ սրբազան է:

— Ա՛հ, ինձ հետ մի՛ խոսեք այդ մասին, — բացականչեց երիտասարդ և գեղադեմ Բելվիդերոն, — աշխարհում կա միայն մի հավիտենական հայր, և դժբախտությունը ցանկացել է, որ նա ինձ վիճակվի:

Ֆերրարայի յոթ կուրտիզանուհիները, դոն Ժուանի բարեկամները և նույն ինքն իշխանը սարսափի ճիչ արձակեցին:

Երկու հարյուր տարի հետո, Լուդովիկոս XV-ի ժամանակ, նրբաճաշակ մարդիկ կծիծաղեին այդպիսի բանի վրա: Բայց գուցե և, զինարբուքի սկզբում, հոգիները դեռևս չէին պղտորվել: Եվ չնայած հուրհրատող մոմերին, կրքերի գոչյունին, ոսկե և արծաթե անոթներին, զինու գոլորշուն, չնայած ամենագեղազմայլ կանանց հիասքանչ տեսքին, գուցե, սրտերի խորքում, պահպանվել էր փոքր-ինչ ամոթխածություն մարդկային և աստվածային բաների նկատմամբ, քանի դեռ խրախճանքը այն չէր խեղդել զինու կայծկլտուն իր կոհակների մեջ: Արդեն ծաղիկները ճմոված էին, աչքերը մոլորուն, և զինովությունը, ըստ Ռաբլեի արտահայտության, հասնում էր նույնիսկ սանդալներին:

Լոռության այդ բոլորին դուռը բացվեց. և, ինչպես Բալթազարի խնջույքին, աստվածն հայտնվեց: Նա երևաց ձերմակ մագերով, երերուն քայլվածքով, հոնքերը պոստած մի ծերունի սպասավորի կերպարանքով: Մուտք գործելով թախճոտ դեմքով՝ նա մի հայացքով խամրեցրեց պսակները, ոսկեգույն բաժակները, բրգացած մրգերը, տոնախմբության շուքը, զարմացած դեմքերի ծիրանին և կանանց սպիտակ բազուկներով ճմրթված բարձիկների վառ գույները. կարճ ասած, նա հողս ցնդեցրեց նրանց այդ ամբողջ խենթությունը, խուլ ձայնով ասելով հետևյալ մոայլ խոսքերը.

— Պարո՛ն, ձեր հայրը մեռնում է...

Դոն Ժուանը վեր կացավ, իր հյուրերին և իշխանին անելով մի այնպիսի շարժում, որ կարելի է մեկնաբանել այսպես. «Ինձ ներեցեք, սա ամեն օր պատահող բան չէ»:

Մի՞թե հոր մահը հաճախ անակնկալի չի բերում երիտասարդներին՝ կյանքի պերճանքի, զինարբուքի խելառ պարուրանքի մեջ: Մահն այնքան հանկարծակի է իր քմայքներում, ինչքան կուրտիզանուհին իր քամահրանքներում. մահը կին է՝ ամուսնությամբ կապված մարդկային հասարակության հետ և նա հավատարիմ է: Որտե՞ղ է այն մարդը, որին նա դավաճանել է:

Երբ դոն Ժուանը փակեց դահլիճի դուռը և քայլեց որքան սառը, նույնքան և մոայլ երկար միջանցքով, նա ճիգ գործադրեց բեմական զսպվածություն ընդունելու, որովհետև, մտածելով որդու իր դերի մասին, անձեռոցիկի հետ միասին նետել էր և իր ուրախությունը: Խավար գիշեր էր: Լռակյաց ծառան, որն առաջնորդում էր երիտասարդին դեպի մեռելասենյակ, բավականին վատ էր լուսավորում իր տիրոջը, այնպես որ ՄԱՀԸ, որին օգնում էին ցուրտը, լռությունը, խավարը, թերևս զինովությունից առաջացած ուժերի անկումը կարողացան մի քանի խորհրդածություններ սահեցնել այդ շոայլողի հոգում: Նա վերակոչեց իր ամբողջ կյանքը և դարձավ մտածկոտ՝ ինչպես մարդ լինում է, երբ դատարան է տարվում:

Բարթոլոմեո Բելվիդերոն՝ դոն Ժուանի հայրը, իննսուն տարեկան մի ծերունի էր, որն իր կյանքի մեծ մասը անց էր կացրել առևտրի կոմբինացիաների մեջ: Անցած լինելով հաճախ Արևելքի

թալիսմաններով հայտնի երկրների միջով՝ նա այնտեղ ձեռք էր բերել անսահման հարստություններ և գիտելիքներ՝ ավելի թանկարժեք, — ասում էր նա, — քան ոսկին և աղամանդները, որոնցով այն ժամանակ նա այլևս չէր հետաքրքրվում:

— Ես գերադասում եմ ատամը գոհարին, և ուժը՝ իմաստությանը... — ժպտալով բացականչում էր նա երբեմն:

Այս բարի հայրը սիրում էր, որ դոն Ժուանը իրեն պատմի երիտասարդական ինչ-որ թեթևադիպության մասին, և նրան շոայլելով ոսկին, նա ասում էր ծաղրասիրաբար կատակելով.

— Սիրելի զավակս, միայն քեզ զվարճացնող հիմարություններն արա...

Դա միակ ծերունին էր, որը, տեսնելով երիտասարդներին, հաճույք էր զգում: Հայրական սիրով նայելով իր որդու փայլուն կյանքի վրա, նա մոռանում էր իր գառամությունը:

Վաթսուն տարեկան հասակում Բելվիդերոն հրապուրվել էր հեզահամբույր և չքնաղ մի հրեշտակով: Դոն Ժուանը եղել էր այդ հապաղած և վաղանցիկ սիրո միակ պտուղը: Դրա համար էլ ավելորդ է ասել, թե Բարթոլոմեոն որքան էր սիրում իր որդուն, որն այդ պաշտելի կնոջ կենդանի պատկերն էր: Արդեն տասնհինգ տարի էր, ինչ ծերունին ողբում էր իր սիրասուն Ժուանայի կորուստը: Նրա բազմաթիվ սպասավորները և որդին այդ ծերունական վշտին էին վերագրում նրա մոտ ամբացած տարօրինակ սովորությունները: Եվ իրոք, Բարթոլոմեոն ապաստանել էր իր պալատի ամենաանհամբույր թևում: Նա այդտեղից հազվադեպորեն էր դուրս գալիս, և դոն Ժուանն անգամ չէր կարող մուտք գործել հոր հարկաբաժինը՝ առանց թույլտվության: Եթե այս կամավոր մենակյացը երբեմն գնում գալիս էր պալատում կամ Ֆերրարայի փողոցներում, թվում էր, թե նա փնտրում է ինչ-որ բան, որն իրեն պակասում էր. նա քայլում էր մտախոհ, տարտամորեն, ինչ-որ մտքի կամ հիշատակի դեմ մաքառող մարդու մտահոգությամբ: Այն պահին, երբ երիտասարդը խրախճանքներ էր կազմակերպում, երբ պալատը թնդում էր ցնծության շոնդալի ձայներով, երբ ձիերը սիգանալով վրնջում էին բակերում, երբ մանկլավիկները վիճում էին՝ զառ նետելով աստիճանների վրա, Բարթոլոմեոն ուտում էր յոթ ունցիա հաց և խմում միայն ջուր: Եթե նրան թոչնդեղն էր պետք լինում, ապա միայն նրա համար, որպեսզի ոսկորները տար սև, զանգրամազ մի շան՝ իր հավատարիմ ընկերակցին: Նա երբեք չէր գանգատվում աղմուկից: Նույնիսկ իր հիվանդության ժամանակ, երբ որսորդական եղջերափողի հռնդյունները կամ շների հաչոցները անակնկալորեն և հանկարծակի արթնացնում էին նրան, նա բավարարվում էր ասելով.

— Ա՛հ, այդ դոն Ժուանն է վերադառնում...

Երբեք այս աշխարհում այնքան հարմարվող և այնքան ներողամիտ հայր չէր հանդիպել: Դրա համար էլ, երիտասարդ Բելվիդերոն, վարժված լինելով նրա հետ վարվել առանց պաշտոնականության, ուներ շփացած երեխաների բոլոր թերությունները: Նա Բարթոլոմեայի հետ վերաբերվում էր այնպես, ինչպես քմահաճ կուրտիզանուհին իր ծեր սիրեկանի հետ՝ որևէ անպատկառություն ներել տալով մի ժպիտով, վաճառելով իր զվարթ բնավորությունը, և անփույթ՝ ընդունելով սերն ու գգվանքը:

Մտքով վերակառուցելով իր մատաղ հասակի տարիների պատկերները՝ դոն Ժուանը նկատեց, որ դժվար էր գտնել թեկուզ մի փոքր դեպք, երբ հայրը որևէ կերպ թերացած լիներ իր նկատմամբ ցուցաբերած բարության մեջ: Ուստի, այն բռնաբան, երբ նա անցնում էր միջանցքով, զգաց, որ խղճի խայթ է ծնվում իր սրտի խորքում, և նա գրեթե պատրաստ էր իր հորը ներել այդքան երկար

ապրելու համար: Նա վերադառնում էր դեպի որդիական բարեպաշտ զգացմունքները, ինչպես ավագակն է դառնում ազնիվ մարդ, երբ... մի միլիոն է գողանում:

Շուտով նա անցավ բարձրակառույց և սառը սրահների միջով, որոնք իր հոր հարկաբաժինն էին կազմում և, զգալով խոնավ մթնոլորտի ազդեցությունը, շնչելով թանձրացած օդը, հատակի և որմերի հնամենի գորգերից և փռելակալած պահարաններից արտաբուրող կծու հոտը, նա իրեն գտավ ծերունու վաղեմի սենյակում, գարշաբույր անկողնու առջև, համարյա հանգած օջախի մոտ: Գոթական ձևի սեղանի վրա դրված լամպը անկողնու վրա անհամաչափ, առավել կամ նվազ ուժգնությամբ լույսի շերտեր էր գցում, այսպիսով ցույց տալով ծերունու դեմքը միշտ տարբեր ասպեկտներով: Մառը քամին սուլում էր վատ փակված պատուհանների միջով և ապակիները, ձյունակոծ, խուլ դղրդում էին:

Այս տեսարանը այնքան խոր և ակնբախ հակադրություն էր կազմում դոն Ժուանի նոր միայն թողած տեսարանի հետ, որ չկարողանալով իրեն պահել, նա ցնցվեց: Այնուհետև, նա սարսռաց, երբ լույսի մի բավականին սաստիկ ցուլք, մղվելով քամու հանկարծակի հորձանքից, լուսավորեց նրա հոր գլուխը. դիմագծերը քայքայված էին. մաշկը, ուժեղ կպած ոսկորներին, ուներ կանաչավուն երանգներ, որոնք և հակադրվելով ծերունու գլխատակի բարձի սպիտակությանը, դառնում էին առավել սոսկալի, ցավից պրկված, կիսաբաց և ատամնազուրկ բերնից դուրս էր գալիս հառաչալից շունչը, որը, մերթ ներդաշնակվելով փոթորկի ոռնոցների հետ, թվում էր, թե առավել ևս է սաստկանում:

Հակառակ ավերածության այս նշաններին՝ այդ գլխի վրա դեռևս բոցկլտում էր արիական խառնվածքի անհավատալի ուժը: Ինչ-որ գերակա ոգի պայքարում էր մահվան դեմ: Հիվանդությունից խոռոչացած աչքերը տարօրինակորեն սևեռում էին և անքթիթ: Թվում էր, թե Բարթոլոմեոն մահամերձի իր հայացքով ճգնում է սպանել սնարի մոտ նստած ինչ-որ թշնամու: Այդ հայացքը՝ սառը և սևեռուն, առավել սարսափազդու էր, քանի որ գլուխը մնում էր անշարժության մեջ՝ նման այն զանգերի, որոնք դրված են լինում սեղանի վրա, բժիշկների մոտ: Մարմինը, որի գծերն էին ընդունել ներքնակի սավանները, ցույց էր տալիս, որ ծերունու անդամները ևս պահում էին նույն ձգվածությունը: Ամեն ինչ մեռած էր, բացի աչքերից: Բերնից դուրս եկող հնչյուններն անգամ ինչ-որ մեխանիկական բան ունեին:

Դոն Ժուանը որոշ ամոթ զգաց՝ հասնելով իր մահամերձ հոր սնարի մոտ, ձեռքում բռնած կուրտիզանուհու մի ծաղկեփունջ, այնտեղ բերելով խրախճանքի անուշահոտությունն ու գինու բույրը:

— Օհո... ո՛ր,— բացականչեց ծերունին նշմարելով որդուն:

Նույն բույրին մի երգչուհու հստակ և քաղցրալուր ձայնը, որը գերում էր հյուրերին, սաստկանալով իրեն նվազակցող վիճի հնչյուններից, եկավ, տիրեց մրրիկի հոնդյունին, և թնդաց մինչև այս մեռելասենյակում: Դոն Ժուանը ոչինչ չլսեց. սակայն հայրը նրան ասաց.

— Զվարճանո՞ւմ էիր, որդիս...

Քաղցրությամբ լի այդ խոսքից դոն Ժուանն իրեն վատ զգաց, և հորը չներեց այդ խոցոտիչ բարեսրտությունը:

— Այո՛,— պատասխանեց նա խոռվահույզ ձայնով,— ... և դա ինձ համար կլինի հավետ խղճահարության պատճառ:

— Խեղճ ժուանիտո...— նորից խոսեց մահամերձը խուլ ձայնով,— ես միշտ այնքան մեղմ եմ եղել քո նկատմամբ, որ դու երբեք չէիր ցանկանա իմ մահը...

— Օ՛հ...— գոչեց դոն ժուանը,— եթե հնարավոր լիներ վերադարձնել ձեզ ձեր կյանքը՝ իմ կյանքի մի մասը տալով...

«Այսպիսի խոսքերը միշտ էլ կարելի է ասել, մտածում էր մսխիչ որդին.— միևնույն է, թե ես աշխարհը որպես ընծա տալի սիրուհուս...»:

Հագիվ թե նրա միտքն ավարտվել էր, երբ գանգրամագ շունը հաչեց: Լսելով նրա խելամուտ ձայնը՝ սարսափ պատեց դոն ժուանին. նրան թվաց, թե շունը հասկացել էր իրեն:

— Ես, իհարկե, գիտեի, որդի՛, որ կարող եմ վստահել քեզ վրա...— բացականչեց մահամերձը:— Ես պիտի ապրե՛մ: Դե՛, դու գոհ կլինես... Ես պիտի ապրե՛մ, բայց առանց քեզ գրկելու քեզ պատկանող օրերի և ոչ մեկից:

«Ձառանցում է»...— ինքն իրեն ասաց դոն ժուանը:

Ապա, նա բարձրաձայն ավելացրեց.

— Այո՛, սիրեցյալ հայր, դուք պիտի ապրեք, ինչ խոսք, այնքան, ինչքան ես եմ ապրելու, որովհետև ձեր պատկերը անընդհատ կլինի իմ սրտում:

— Խոսքն այդ կյանքի մասին չէ.— ասաց ծեր ազնվականը, շտկվելու համար լարելով իր ուժերը, և խորապես հուզված մի այնպիսի կասկածանքով, որպիսին ծնվում է մահամերձների սնարի մոտ:

— Լսի՛ր, որդի,— նորից խոսեց նա՝ այս վերջին ջանքից թուլացած ձայնով:— Ես ցանկություն չունեմ մեռնելու, ինչպես դու ցանկություն չունես գրկվելու քո սիրուհիներից, գինուց, ձիերից, բազեններից, շներից և ոսկուց...

«Իհարկե, հավատում եմ...»,— նորից մտածեց որդին, ծնրադրելով սնարի մոտ և համբուրելով Բարթոլոմեոյի դիակնային ձեռքը:

— Սակայն,— շարունակեց նա,— հա՛յր, թանկագին հայր իմ, պետք է ենթարկվել աստծու կամքին...

— Աստվա՛ծ...— վրա տվեց ծերունին՝ քրթմնջալով:

— Մի՛ հայհոյեք...— գոչեց երիտասարդը՝ նկատելով հոր դիմագծերի սպառնալից տեսքը:— Ձգո՛ւյձ եղեք. դուք ընդունել եք վերջին սուրբ օծումը...

— Դու ուզո՞ւմ ես ինձ լսել,— գոչեց մահամերձը. նրա բերանը կափկափեց:

Դոն ժուանը լռեց. տիրեց ահավոր լռություն: Ձյան սուլոցների միջով, վինի ներդաշնակությունների հետ նորից հասավ քաղցրահնչուն ձայնը, նվաղ, ինչպես նորածագ օրն է: Մահամերձը ժպտաց:

— Դու լավ ես արել, որ հրավիրել ես այդ երգչուհիներին, ունես երաժշտություն... խրախճանք... երիտասարդ և գեղանի կանայք... ձյունասպիտակ... սև վարսերով...— կյանքի ողջ հաճույքները...— Թո՛ղ մնան... Ես հենց հիմա պետք է վերածնվեմ...

«Ձառանցանքը հասավ գագաթնակետին...»,— մտածեց դոն ժուանը:

— Ես հայտնագործել եմ վերակենդանանալու միջոց:— Ա՛յ, այդտեղ:— Փնտրի՛ր այդ սեղանի դարակի մեջ:— Դու այդ կբանաս սեղմելով բռնակի տակ թաքնված գաղտնի զսպանակը:

— Բացել եմ, հա՛յր...

— Ա՛յ, այդտեղ, լա՛վ: Ժայռաբյուրեղյա մի սրվակ է, վերցրո՛ւ:

— Ահա՛ նա:

— Ես քսան տարի աշխատեցի...

Այդ րոպեին ծերունին՝ զգալով մոտալուտ վախճանը, լարեց իր մնացած ուժը և ասաց.

— Հենց որ վերջին շունչս փչեմ... դու ինձ կշփես այս ջրով: Ես կվերածնվեմ...

— Այնքան քի՛չ է...— պատասխանեց երիտասարդը:

Բարթոլոմեոն այլևս չէր կարող խոսել. բայց դեռևս նա ուներ լսելու և տեսնելու ընդունակություն. ուստի, նրա գլուխը սոսկալի արագությամբ շրջվելով դեպի դոն Ժուանը, նրա վիզը մնաց ծոված՝ նման մարմարիոնե այն արձանի, որին քանդակագործի մտահղացումը դատապարտել է կողմնակի նայելու: Նրա լայնացած աչքերը ընդունեցին ժանտատեսիլ անշարժություն... Նա մեռած էր, մեռած՝ կորցնելով իր միակ և վերջին պատրանքը...

Իր որդու սրտում ապաստան փնտրելով, նա այնտեղ գտնում էր մի գերեզման ավելի խորունկ, քան այն, որ սովորաբար մարդիկ փորում են իրենց մեռելների համար: Դրա համար էլ, նրա մազերը փշաքաղվել էին նողկանքից և ջղաձիգ հայացքը դեռևս խոսում էր: Դա զայրույթից կատաղած հայրն էր, որը դուրս էր գալիս շիրմից վրեժխնդրություն պահանջելու աստծուց:

— Հա՛, ամեն ինչ վերջացավ...— բացականչեց դոն Ժուանը:

Խորհրդավոր բյուրեղը լամպի աղոտ լույսի դեմ բռնած՝ ինչպես հարբեցողն է գնում իր շիշը ճաշկերույթից հետո, նա չէր տեսել, թե ինչպես ճերմակում են հոր աչքերը:

Շունը, երախը բաց արած, դիտում էր փոխիփոխ իր տիրոջն ու կենսահյուրը, նույնպես և դոն Ժուանն էր նայում մերթ հորը, մերթ սրվակին: Լամպը գցում էր իր վետվետուն շողքը: Լռությունը խորունկ էր, վիճը՝ լռած...

Բելվիդերոն ցնցվեց, կարծելով, որ հոր շարժվելն է տեսնում... Ուստի նրա մեղադրող աչքերի սառած արտահայտությունից վախեցած՝ նա փակեց դրանք, ինչպես աշնան գիշերով նա կհրեր պատուհանի հողմածեծ վանդակափեղկը: Նա մնաց կանգնած, անշարժ, անհուն մտորումների մեջ կորած:

Հանկարծ ինչ-որ խռպոտ աղմուկ, նման ժանգոտված զսպանակի ճոխնչի, խզեց լռությունը: Դոն Ժուանը հանկարծակիի եկած, քիչ էր մնում ձեռքից բաց թողներ սրվակը: Դաշույնի պողպատից ավելի սառը մի քրտինք պատեց նրա մարմինը...

Ներկված փայտե մի աքաղաղ դուրս պրծավ մեծ ժամացույցի վերնից և երեք անգամ երգեց:

Դա հնարագյուտ այն մեքենաներից էր, որոնց օգնությամբ այդ ժամանակաշրջանի գիտնականները արթնանում էին իրենց աշխատանքների համար կանխորոշված ժամին:

Այգաբացը շառագունում էր արդեն պատուհանների ապակիները: Դոն Ժուանը տասը ժամ էր անցկացրել խորհրդածելով: Հնամենի ժամացույցը նրանից ավելի հավատարիմ կերպով էր կատարել Բարթոլոմեոյի հանդեպ իր պարտքը: Այդ մեխանիզմը կազմված էր փայտից, ճախարակներից, լարերից, մանր անիվներից, մինչդեռ ինքն ուներ այն մեխանիզմը, որը կոչվում է «մարդկային սիրտ»:

Խորհրդավոր հեղուկը կորցնելու վտանգին այլևս չենթարկվելու համար, սկեպտիկ դոն Ժուանն այն նորից դրեց տեղը՝ գոթական փոքրիկ սեղանի գգրոցի մեջ:

Այդ հանդիսավոր բոպեին, նա ճեմասրահներից լսեց խուլ ժխոր. խառնաշփոթ ձայներ էին, խեղդված ծիծաղներ, թեթև ոտնաձայններ, ճմոված մետաքսի շրշյուն, վերջապես ուրախ մարդկանց մի խումբ, որ մոտենում էր: Դուռը բացվեց, և իշխանը, դոն Ժուանի բարեկամները, յոթ կուրտիզանուհիներ, երգչուհիներ երևացին այնպիսի խառնափնթոր վիճակում, ինչպիսին պարուհիներն ունեն, հանկարծակիի գալով առավոտյան շողերից, երբ արեգակը մաքառում է մոմերի գունատվող լույսերի դեմ: Նրանք գալիս էին խմբով, ըստ սովորության, երիտասարդ ժառանգորդին ներկայացնելու ցավակցություններ...

— Օհո՛, օհո՛, խեղճ դոն Ժուանն այս մահը լուրջ բանի տեղ է դնում...— ասաց իշխանը Բրամբիլլայի ականջին:

— Բայց... նրա հայրը բարի մարդ էր...— պատասխանեց այդ աղջիկը:

Բայց և այնպես դոն Ժուանի գիշերային խորհրդածությունները նրա դիմագծերին ակներևորեն դրոշմել էին մի այնպիսի սարսափի արտահայտություն, որ դա լռություն պարտադրեց այդ խմբին: Տղամարդիկ մնացին անշարժ: Կանայք, որոնց շրթունքները ցամաքած էին գինուց, և այտերը մարմարիոնի պես երակավորված՝ համբույրներից, ծնկի եկան և սկսեցին աղոթել... դոն Ժուանը չկարողացավ իրեն պահել. նա ցնցվեց, տեսնելով, որ այս շքեղությունները, ցնծությունը, ծիծաղները, երգերը, երիտասարդությունը, գեղեցկությունը, իշխանությունը, մարմնավորված ամբողջ կյանքը խոնարհվում է մահվան առջև... Բայց այդ պաշտելի Իտալիայում, անառակությունն ու կրոնը այն ժամանակ այնքան էին լավ զուգակցվում, որ կրոնն այնտեղ անառակություն էր և անառակությունը՝ կրոն:

Իշխանը գորովագին սեղմեց դոն Ժուանի ձեռքը. բոլորի դեմքերը արտահայտեցին համարյա միևնույն ծամաճռությունը՝ կիսով չափ տխրություն, կիսով չափ անտարբերություն. այնուհետև այդ ֆանտասմագորիան չքացավ, սրահը դատարկվեց: Դա իրոք որ կյանքի մի պատկեր էր:

Սանդուղքներով իջնելիս, իշխանն ասաց աղջիկներից Ռիվաբարելլային.

— Հը՛, ո՞վ կհավատար, որ դոն Ժուանը, սնապարծորեն ամբարիշտ դոն Ժուանը... սիրում է հորը...

— Դուք նկատեցի՞ք սև շանը...,— հարցրեց Բրամբիլլան:

— Հիմա նա հսկայական հարստության տեր է...— հոգոց հանելով պատասխանեց Բիանկա Կավաստոլինոն:

— Իմ ինչի՞ն է պետք...,— գոչեց հպարտ Վարոնեզան, որը փշրել էր կոնֆետատուփը:

— Ինչպե՞ս, թե ինչիդ է պետք...,— բացականչեց դուքսը,— բայց նա ինձնից ավելի է իշխան իր փողով:

Դոն Ժուանը, տարուբերվելով հազար ու մի մտորումների միջև, նախ տատանվեց. նա չգիտեր՝ ինչպես կողմնորոշվել: Բայց խորհուրդ անելով հոր կողմից կուտակված գանձի հետ, նա, երեկոյան դեմ վերադարձավ մեռելասենյակ՝ հոգին փոթորկված զարհուրելի եսամոլությամբ:

Հարկաբաժնում նա գտավ տան բոլոր սպասավորներին, որոնք զբաղված էին պատրաստելով շքամահճի զարդարանքները, որի վրա հանգուցյալ մոնսիյորը պետք է ցուցադրվեր հաջորդ օրը, լուսաշող սենյակի մեջտեղում. դա հետաքրքրական տեսարան էր, որ ամբողջ Ֆերրարան պետք է զար հիացմունքով դիտելու: Դոն Ժուանի մի ազդանշանի վրա բոլոր ծառայողները կանգ առան, շփոթված, դողդողալով...

— Ինձ թողեք մենակ,— ասաց նա այլայլված ձայնով.— դուք այստեղ կմտնեք միայն այն ժամանակ, երբ ես դուրս կգամ այստեղից:

Երբ ամենավերջը հեռացող ծեր սպասավորի քայլերն այլևս թուլորեն հնչեցին սալաքարերի վրա՝ դոն Ժուանը հապշտապ փակեց դուռը, և վստահ, թե մենակ է, բացականչեց.

— Փորձե՛նք...

Բարթոլոմեյի մարմինը փռված էր մի երկար սեղանի վրա: Բոլորի հայացքներից քողարկելու համար ժանտատեսիլ դին, որը ծայր աստիճան զառամությունից և նիհարությունից կմախքի էր նմանվում, զնոտողները մարմնի վրա գցել էին մի սավան: Բացի գլխից՝ Բարթոլոմեոն ամբողջությամբ ծածկված էր այդ սավանով: Այս մի տեսակ մոմիան հանգչում էր սենյակի մեջտեղում. փափուկ ծածկույթը տարտամորեն գծագրում էր մարմնի սուր, ձգված և վտիտ ձևերը: Դեմքի վրա երևում էին մանուշակագույն լայն բծեր, որոնք ցույց էին տալիս զնոսումն ավարտելու անհրաժեշտությունը:

Չնայած այն սկեպտիկության, որով նա զինված էր, դոն Ժուանը դողդողաց՝ բաց անելով բյուրեղյա մոզական սրվակի բերանը: Երբ հասավ գլխի մոտ, նա նույնիսկ ստիպվեց մի րոպե կանգ առնել. սարսուռը պատել էր նրան: Բայց այս երիտասարդի հոգին, վաղ ժամանակից հմտորեն ապականվել էր զելի արքունիքի բարքերից. ուրեմն, Ալեքսանդր պապին արժանավայել ինչ-որ մտահղացում եկավ նրան արիություն ներշնչելու, որն ավելի ամրապնդվում էր հետաքրքրասիրությունից:

Թվում էր, թե սատանան նրան շնչացած լինել հետևյալ խոսքերը, որոնք թնդացին նրա սրտում.

— Թրջի՛ր մի աչքը...

Նա վերցրեց ինչ-որ լաթ, և թանկարժեք հեղուկի մեջ ժլատաբար այն թաթախելուց հետո, թեթևորեն անցկացրեց դիակի աջ կռպի վրա:

Աչքը բացվեց:

— Ա՛հ, ա՛հ, ասաց դոն Ժուանը՝ երազկոտ և պինդ սեղմելով սրվակը ձեռքում, ինչպես մենք սեղմում ենք այն ճյուղը, որից կախված ենք լինում անդունդի վրա:

Նա տեսնում էր կենսահորդ մի աչք, երեխայի աչք՝ մեռելի գլխում: Այնտեղ լույսը պլպլում էր մատղաշ ավյունի մեջ, և, գեղեցիկ թարթիչներով պաշտպանված՝ այդ լույսը շողշողում էր նման այն միայնակ ցուլին, որ ճամփորդն է նշմարում ձմռան գիշերով, ամայի դաշտավայրում: Թվում էր, թե բոցավառ աչքն ուզում է խոյանալ դեպի դոն Ժուանը. և այդ աչքը մտածում էր, մեղադրում, վճռում, սպառնում, դատապարտում, խոսում. նա ճշում էր, կծում: Մարդկային բովանդակ կրքերը

ալեկոծվում էին այնտեղ. դրանք հեզիկ պաղատանքներ էին. ապա արքայական զայրույթ. դեռատի աղջկա սերն էր դա, որն աղերսում էր դահիճներին՝ իրեն շնորհել կյանքը. դա այն խորունկ հայացքն էր, որ մարդ զգում է մարդկանց վրա՝ կառափնատի բեմի վերջին աստիճանը բարձրանալիս, վերջապես, այնքան կյանք կար այդ կյանքի բեկորի մեջ, որ դոն Ժուանը սարսափահար ընկրկեց: Նա դեսուդեն պտույտ կատարեց սենյակում, չհամարձակվելով այլևս նայել այդ աչքին, բայց նա նորից էր տեսնում այն՝ տախտակամածի վրա, գորգերի վրա, ամենուրեք: Ողջ սենյակում ցրիվ էին եկած ասեղներ՝ հրեղեն, կենսալի, իմաստալի... Միշտ աչքեր, որոնք հետապնդում էին նրան:

— Ճշմարիտ, որ նա կարող էր վերապրել հարյուր տարի նս,— բացականչեց նա այն պահին, երբ ինչ-որ դիվային ազդեցության տակ ետ գալով հոր առջև՝ նա դիտում էր այդ առկայծող լույսը: Իսկույն խելամիտ կոպը փակվեց և հանկարծակի նորից բացվեց, ինչպես կնոջ կոպն է անում ի նշան հավանության:

Եթե մի ձայն ճչար. «Այո՛» դոն Ժուանն ավելի ահաբեկված չէր լինի:

— Ի՞նչ անել...— մտածեց նա:

Իր մեջ նա բավական արիություն գտավ և փորձեց փակել այդ ճերմակ կոպը. սակայն նրա բոլոր ջանքերը ապարդյուն եղան:

— Հանե՛լ աչքը... դա գուցե հայրասպանություն լինի...

— Այո՛...,— ասաց աչքը զարմանալիորեն հեզնական մի թարթումով:

— Է՛հ,— բացականչեց դոն Ժուանը,— սրանում ինչ-որ կախարդանք կա.

Եվ նա մոտեցավ աչքին, որպեսզի այն ճմլի:

Արցունքի խոշոր մի կաթիլ գլորվեց դիակի խոռոչացած այտերի վրա. և, այդտեղից՝ Բելվիդերոյի ձեռքի վրա:

— Ինչ կիզի՛չ է...— գոչեց նա:

Ապա նա նստեց: Այդ պայքարից հոգնել էր. կարծես նա Հակոբի նման մարտնչել էր հրեշտակի դեմ: Վերջապես նա վեր կացավ ինքն իրեն ասելով.

— Միայն թե արյուն չլինի:

Ապա, հավաքելով այնքան քաջություն, ինչքան իրեն պետք էր վատոզի լինելու համար, նա ճմլեց աչքը՝ լաթով տրորելով այն, բայց առանց դրան նայելու:

Մի մեծ թառանչանք դուրս եկավ, ողբազին ահարկու:

Գանգրամազ խեղճ շունը շունչն էր փչում ոռնալով:

«Արդյոք նա գաղտնիքին տեղյա՞կ էր...»,— ինքն իրեն հարց տվեց դոն Ժուանը՝ նայելով հավատարիմ կենդանուն:

Դոն Ժուան Բելվիդերոն շատ բարեպաշտ որդու համբավ ունեցավ. նա հոր գերեզմանի վրա կանգնեցրեց սպիտակ մարմարիոնե հուշարձան, և ֆիգուրի կատարումը վստահեց այդ ժամանակի

ամենահեռավոր արվեստագետներին: Նա կատարելապես հանգստացավ միայն այն ժամանակ, երբ իր հոր արձանը, կրոնի պատկերի առջև ծնրադիր, իր ահռելի ծանրությամբ ճնշեց այն շիրիմը, որի մեջ որդին թաղեց իր մարմնական հոգնության պահերին իրեն տագնապ ազդող խղճի խայթը:

Հաշվառման առնելով հին արևելագետի կուտակած անսպառ հարստությունները՝ դոն Ժուանը դարձավ ազահ: Չէ՞ որ նրան մարդկային երկու կյանքի համար էր փող հարկավոր:

Նրա խորապես քննական հայացքը թափանցեց հասարակական կյանքի էության մեջ և է՛լ ավելի լավ ըմբռնեց աշխարհը, որովհետև այն տեսավ անդրշիրիմյան խավարի միջով:

Նա վերցրեց ոգին ու մատերիան, գցեց քուրայի մեջ ու այնտեղ ոչինչ չգտավ, և դրանից հետո նա դարձավ իսկական **դոն Ժուան**:

Տիրելով կյանքի պատրանքներին՝ նա առաջ խոյացավ, երիտասարդ և գեղադեմ, արհամարհելով աշխարհը և սակայն նվաճելով այն: Նրա երջանկությունն այն չէր, իհարկե, ինչ քաղքենիական երանությունն է, որը սնվում է անփոփոխ խաշած մտով, անկողին տաքացնելու ջեռակով՝ ձմռանը, լամպով՝ գիշերը, և նոր հողաթափերով՝ յուրաքանչյուր եռամսյակին... Ոչ, նա ճանկեց կյանքը, ինչպես կապիկն է ճանկում ընկույզը, և, չլինելով այն մարդկանցից, որոնք երկարորեն զվարճանում են ինչ-որ դատարկ և հիմար խաղալիքով, նա հմտորեն կճպեց պտղի կոշտ կեղևները և հեշտագին ըմբռնիչներ նրա քաղցրահամ միջուկը: Պոեզիան, մարդկային զգացմունքները, հուզականությունը նրա համար չէին: Նա երբեք չգործեց այն հզոր մարդկանց սխալանքը, որոնք, երևակայելով երբեմն, որ մանր հոգիները հավատում են մեծ հոգիներին, վճռում են ապագայի բարձր մտքերը մանրացնել մեր առօրյա կյանքի մանր դրամաներով: Նա իհարկե կարող էր նրանց պես քայլել՝ ոտքերը երկրի վրա, իսկ գլուխը երկինք մխրճել, բայց նա գերադասում էր նստել, և իր համբույրներով ցամաքեցնել կանացի շատ շուրթեր՝ զովաշունչ, նորափթիթ, տամուկ ու բուրավետ, որովհետև, Մահվան նման, ո՛ր տեղից անցնում էր, խժռում էր ամեն ինչ, անպատկառորեն չցանկանալով ուրիշ բան, քան այն սերը, որ տիրանում է, արևելյան սերը՝ երկարատև և հեշտ վայելքներով հագեցված: Կանանց մեջ միմիայն կինը սիրելով, նա հեզմանք էր դարձրել իր վարվելակերպը: Երբ նրա սիրուհիները անկողինը ծառայեցնում էին երկինք բարձրանալու, արբեցուցիչ հոգեզմայլության մեջ անէանալու համար, դոն Ժուանը նրանց հետևում էր բացսիրտ և անկեղծ, ինչպես կարող էր լինել գերմանացի ուսանողը, սակայն նա ասում էր ԵՄ, երբ նրա սիրուհին՝ խելակորույս, մարմնակործան, ասում էր ՄԵՆՔ...

Նա հիանալիորեն լավ գիտեր ենթարկվել կնոջ հրապուրանքին, իր մեջ միշտ ունենալով բավականաչափ ուժ, որպեսզի նրան հավատացնի, թե դողում է պատանի դպրոցականի նման, որը պարահանդեսում ասում է իր հետ պարող աղջկան. «Դուք սիրո՞ւմ եք պարը»: Բայց նա գիտեր և ժամանակին մոնչալ, քաշել իր հզոր սուրը և փշրել կոմանդորներին: Ծաղրանք կար նրա պարզության մեջ և ծիծաղ՝ արցունքներում, որովհետև նա գիտեր արտահայտվել այն կնոջ չափ, որն ամուսնուն ասում է. «Տվեք ինձ շքակառք և սպասավորներ, թե ոչ կմեռնեմ թոքախտից»:

Վաճառականների համար աշխարհն ինչ-որ հակ է կամ շրջանառության մեջ եղող թղթադրամների կույտ. երիտասարդների համար դա կինն է. մի քանի կանանց համար՝ դա տղամարդն է, որոշ մարդկանց համար՝ դա սալոն է, խմբակ, թաղամաս, քաղաք, բայց դոն Ժուանի համար տիեզերքը՝ դա — ինքն էր: Որպես տիպար բարեշնորհության և ազնվատոհմության, հրապուրիչ ուշիմությամբ, նա իր նավակը կապեց բոլոր ափերին, սակայն, թողնելով հանդերձ, որ իրեն տանեն, նա, այնուամենայնիվ, գնում էր մինչև այնտեղ միայն, ուր ինքն էր կամենում գնալ: Ինչքան ապրեց, այնքան նա տարակուսեց: Զննելով մարդկանց, նա գուշակեց, որ հաճախ քաջությունը՝ դա հանդգնություն էր, զգուշությունը՝ երկշտություն, վեհանձնությունը՝ խորամանկություն,

արդարությունը՝ ոճրագործություն, ազնվությունը՝ հիմարություն, ուղղամտությունը՝ շրջահայեցություն և, տարօրինակ ճակատագրականությամբ, նա նկատեց, որ այն մարդիկ, որոնք իսկապես ուղղամիտ, ազնիվ, արդարադատ, վեհանձն, զգուշավոր և քաջարի են, ոչ մի հարգանք չէին վայելում մարդկանց մեջ:

«Ինչ սառը կատակերգություն,— ասաց նա ինքն իրեն:— Մա աստծու գործ չէ»:

Եվ այն ժամանակ, հրաժարվելով կրոնի խոստացած լավագույն աշխարհից, նա ոչ մի սրբազան անվան առջև գլխարկ չհանեց և եկեղեցականների քարաքանդակ սրբերին դիտեց որպես արվեստի գործեր: Սակայն, ըմբռնելով մարդկային հասարակությունների մեխանիզմը՝ նա երբեք չափից դուրս չընդհարվեց նախապաշարմունքների հետ, որովհետև ինքն այնքան հզոր չէր, որքան դահիճը. բայց նա այնպիսի բարեշնորհությամբ և այնպիսի նրբամտությամբ էր շրջանցում հասարակական օրենքները, որ հիանալիորեն պատկերացված է պարոն Դիմանշի հետ ունեցած տեսարանում¹, որովհետև ճակատագիրը նրան վիճակել էր դառնալ Մովսեսի դոն Ժուանի, Գյոթեի Ֆաուստի, Բայրոնի Մանֆրեդի և Մատյուրենի Մելմոթի կերպարը: Հոյակապ պատկերներ, որոնք կերտվել են Եվրոպայի ամենամեծ հանճարների կողմից, և որոնց համար պիտի չպակասեն ո՛չ Մոցարտի ներդաշնակությունները, ոչ էլ գուցե, Ռոսսինիի քնարը... Սոսկալի պատկերներ, ուր մարդու մեջ գոյություն ունեցող չարի սկզբունքը հավերժացվում է, և որոնց պատճեններն անցնում են մի դարից մյուսը: Երբեմն այդ կերպարը բանակցությունների մեջ է մտնում մարդկանց հետ, ինչպես Միրաբոն, երբեմն նա բավարարվում է լուռ գործելով, ինչպես Բոնապարտը, կամ թե հեզնանքով հետապնդում է տիեզերքը, ինչպես աստվածային Ռաբլեն, կամ հաճախ նա ծիծաղում է մարդկանց վրա, փոխանակ ծաղրելու իրերի կարգ ու սարքը, ինչպես մարշալ դը Ռիշելյոն². Իսկ ավելի հաճախ նա ծաղրի է ենթարկում և՛ մարդկանց, և՛ իրերի կարգ ու սարքը, ինչպես մեր դեսպաններից ամենահռչակավորը:

Սակայն դոն Ժուան Բելվիդերոյի խորունկ հանճարը վաղօրոք խտացրեց իր մեջ այդ բոլոր հանճարները, որովհետև նա ամեն ինչի վրա ծիծաղեց. նրա կյանքը համակ ծաղր էր, որն ընդգրկում էր մարդկանց, իրերը, օրենքներն ու գաղափարները:

Ինչ վերաբերում է հավիտենականությանը՝ նա կես ժամ մտերմորեն զրուցել էր պապ Հուլիոս II-ի հետ. և, զրույցի վերջում, ծիծաղելով ավելացրել էր.

— Եթե անպայման պետք է ընտրություն կատարել, ապա, ես կգերադասեմ հավատալ աստծուն, քան սատանային: Հզորությունը, բարությանը միացված, այնուամենայնիվ ավելի շատ օգուտ է խոստանում, քան չար ոգին:

— Այո. բայց աստված ուզում է, որ մարդիկ ապաշխարեն այս աշխարհում...

— Դուք ուրեմն միշտ մտածում եք մեղքերի ձեր թողության մասի՞ն...,— պատասխանեց Բելվիդերոն:— Դե՛ լավ, իմ առաջին կյանքի մեղքերը քավելու համար ես ունեմ պահեստի մի ամբողջ կյանք:

— Ա՛հ, անհավատ,— բացականչեց պապը,— չլինի սրբերի կարգը դասվես...

— Քանի որ դուք պապության հասաք, ամեն ինչի կարելի է հավատալ:

Եվ նրանք գնացին տեսնելու այն բանվորներին, որոնք զբաղված էին կառուցելու սուրբ Պետրոսին նվիրված հոյակերտ մայր տաճարը:

— Սուրբ Պետրոսը հանճարեղ մարդ էր..., — ասաց պապը դոն ժուանին. — նա իրոք որ արժանի է այս հուշարձանին: Բայց երբեմն, գիշերը, ես մտածում եմ, որ մի ինչ-որ ջրհեղեղ կարքի այս բոլորը... և պետք կլինի գործը վերսկսել...

Դոն ժուանը և պապը սկսեցին ծիծաղել. նրանք իրար հասկացել էին: Հիմարի մեկը հաջորդ օրը կգնար զվարճանալու Հուլիոս II-ի հետ Ռաֆայելի մոտ, կամ հիասքանչ «Մադամա» վիլլայում. սակայն Բելվիդերոն գնաց նրան տեսնելու հայրապետաբար աստվածային պաշտամունքը կատարելիս, որպեսզի համոզվեր իր կասկածանքների մեջ: Մի խրախճանքի ժամանակ պապը կարող էր ինքը իրեն հերքել և զբաղվել Հովհաննոս **Հայտնության** մեկնաբանությամբ:

Բայց այս լեզենդը նպատակ չունի նյութեր հայթայթելու նրանց, ովքեր կուզենային հուշեր գրել դոն ժուանի կյանքի մասին. դրա նպատակն է ապացուցել ազնիվ մարդկանց, որ Բելվիդերոն չի մահացել, մենամարտելով քարե արձանի դեմ, ինչպես այդ ուզում են հավատացնել մի քանի վիմագիրներ:

Երբ դոն ժուան Բելվիդերոն ութսուն տարեկան դարձավ, եկավ հաստատվելու Իսպանիայում: Այնտեղ, ծերունական հասակում, նա ամուսնացավ մի դեռատի և գեղազմայլ անդալուզուհու հետ: Բայց նա ո՛չ բարի հայր եղավ, ո՛չ էլ լավ ամուսին: Նա որոշ հաշվից էր ելնում: Նա դիտել էր, որ մենք գորովագին սիրվում ենք միայն այն կանանց կողմից, որոնց մասին բնավ էլ չենք մտածում: Դոնա Էլվիրային բարեպաշտորեն մեծացրել էր մի պառավ մորաքույր, Անդալուզիայի խորքում, Սուրբ-Լուկարից մի քանի մղոն հեռավորության վրա գտնվող մի դղյակում. նա համակ անձնվիրություն էր և համակ նազելիություն: Դոն ժուանը կռահեց, որ նա այն կանանցից էր, որոնք կրքին անձնատուր են լինում երկար ժամանակ դրա դեմ պայքարելուց հետո. ուստի և նա հույս ուներ, որ կկարողանար նրան առաքինության մեջ պահել մինչև իր մահը: Դա մի լուրջ կատակ էր, ինչ-որ շախմատի խաղ, որ նա իրեն էր վերապահում խաղալու իր ծերության օրերին:

Իր հոր՝ Բարթոլոմեոյի գործած սխալների փորձով զինված, դոն ժուանը որոշեց օգտագործել իր ծերության ամենադույզն արարքներն իսկ, որպեսզի հաջողեցնի այդ դրաման, որը պետք է խաղացվեր իր մահվան անկողնու վրա: Այսպես, օրինակ, հարստությունների ամենամեծ մասը մնաց թաղված Ֆերրարայի իր պալատի նկուղներում, ուր նա գնում էր հազվադեպորեն: Գալով գանձի մյուս կեսին՝ նա այն վերածեց կենսաթոշակի, որպեսզի այդպիսով իր կյանքի տևողության նկատմամբ շահագրգռի և՛ կնոջը, և՛ զավակներին, մի խորամանկություն, որին պետք է դիմած լիներ և իր հայրը: Բայց այս մաքիավելական սպեկուլյացիան նրան այնքան էլ անհրաժեշտ չեղավ: Երիտասարդ Ֆիլիպ Բելվիդերոն՝ նրա որդին, դարձավ այնքան բարեխղճորեն կրոնասեր մի իսպանացի, ինչքան հայրն էր ամբարիշտ, — գուցե և զորությամբն այն առածի, որն ասում է. ժլատ հոր՝ վատնիչ որդի:

Սուրբ-Լուկարի աբբահայրը դոն ժուանի կողմից նշանակվեց որպես դքսուհի դը Բելվիդերոյի և Ֆիլիպի խոստովանահայրը: Այս եկեղեցականը սուրբ մարդ էր, բարձրահասակ, զմայլելիորեն վայելչակազմ, սևահեր, ծոմապահությունից հոգնատանջ, անձնահարությունից ճերմակած Տիբերիուսյան գլխով, և ենթակա ամենօրյա փորձության, ինչպես բոլոր մենակյացները: Ծերունի իշխանագունը գուցե հույս ուներ, թե կկարողանար սպանել և մի վանականի՝ նախքան իր առաջին կյանքն ավարտելը: Բայց, թերևս վանականը դոն ժուանի չափ հաստատակամ էր, կամ որովհետև դոնա Էլվիրան ուներ շատ ավելի զգուշություն ու առաքինություն, քան ամուսինն էր կարծում, որ կանայք կարող էին ունենալ՝ Բելվիդերոն հարկադրվեց իր վերջին օրերն անցկացնել գյուղական ծեր քահանայի նման՝ առանց ոչ մի գայթակղություն ունենալու իր ընտանիքում:

Երբեմն նա հրճվում էր, երբ որդուն կամ կնոջը բռնում էր իրենց կրոնական պարտականությունների մեջ թերանալիս, և նա պահանջում էր վճռականորեն, որ նրանք կատարեն այն բոլորը, ինչ Հոռմը պարտավորեցնում էր հավատացյալներին կատարել: Մի խոսքով, նա իրեն շատ երջանիկ էր զգում, երբ լսում էր Սուրբ-Լուկարի կնամեծար վանահոր, դոննա Էլվիրայի և Ֆիլիպի վիճաբանությունը կրոնի հետ կապված ինչ-որ հարցի շուրջը:

Այնուամենայնիվ, հակառակ անչափ խնամքներին, որ իշխանագուն դոն Ժուանը շոայլում էր իր անձի հանդեպ, գառամության օրերը հասան, վշտահար այդ տարիքի հետ միասին եկան և անգործության ճիչերը, այնքան առավել սրտակեզ, որքան ավելի հորդառատ էր հուշերի ուժը: Այս մարդը, որի մոտ հեզանքի ծայր աստիճանն այն էր, որ ուրիշներին ստիպում էր հավատալ այն օրենքներին և սկզբունքներին, որոնց նկատմամբ ինքը միայն ծաղրանք ուներ, օրորվում էր **գուցե**–ի խաբուսիկ հույսով: Այս բարեձևության տիպարը, այս դուքսը, հուժկու՝ գինարբուքի ժամանակ, անբարտավանորեն սիգապանձ՝ արքունիքներում, շնորհագեղ՝ կանանց մոտ, որոնց սիրտը ոլորել էր այնպես, ինչպես շինականը ուռենու ճյուղն էր ոլորում, այս հանճարամիտ մարդը տառապում էր ինչ-որ համառ խուխախտից, նստելատեղի նյարդի տաղտկալի բորբոքումով, դաժան հոդացավից: Նա տեսնում էր, որ ատամները լքում են իրեն, ինչպես երեկոյթի վերջում պճնագարդ, սպիտակափայլ կանայք են հեռանում մեկ առ մեկ, թողնելով դահլիճը թափուր և կահագուրկ: Վերջապես, նրա առույգ ձեռքերը սկսեցին դողդողալ, նրբակերտ սրունքները երերացին և, մի երեկո, կաթվածը սեղմեց նրա վիզը իր կեռ և սառը մագիլներով:

Այդ ճակատագրական օրվանից հետո, նա խոժոռվեց, դարձավ դաժան: Նա մեղադրում էր որդուն և կնոջը նրանց անձնվիրության համար, պնդելով երբեմն, որ նրանց սրտառուչ և գործվագութ խնամքները իր հանդեպ այդպես քնքշորեն շոայլվում են միմիայն նրա համար, որովհետև իր ամբողջ հարստությունը վեր էր ածել կենսաթոշակի: Էլվիրան և Ֆիլիպը դառը արտասվում էին և կրկնապատկում իրենց փաղաքշանքները նենգամիտ և խորամանկ հիվանդի հանդեպ, որի բեկբեկուն ձայնը դառնում էր սիրագեղ, որպեսզի նրանց ասեր.

— Հարազատնե՛րս, սիրելի՛ կինս, դուք ինձ ներում եք, չե՞... Ես ձեզ մի փոքր տանջո՞ւմ եմ — ավա՛ղ, աստվա՛ծ իմ, դու ինձ գործիք դարձրիք փորձելու համար այս երկու երկնային էակներին... Ես, որ նրանց ուրախությո՛ւնը պետք է լինե՛ի՝ հանդիսանում եմ նրանց պատուհասը...

Այս կերպ նա նրանց շղթայակապ պահեց իր սնարի մոտ, մոռացնել տալով հիվանդի իր քմահաճույքներով ամիսներ ամբողջ նրանց պատճառած սրտնեղություններն ու ցուցաբերած անգթությունները, մի որևէ ժամում նրանց առջև սփռելով բարեշնորհության և կեղծ սիրո միշտ նորահնար գանձերը: Հայրական այս սիստեմը նրան հաջողվեց անհամեմատ ավելի լավ, քան այն սիստեմը, որ ժամանակին հայրն էր օգտագործել նրա նկատմամբ...

Վերջապես, նա հիվանդության այնպիսի աստիճանի հասավ, երբ այլևս անկողնու մեջ տեղավորելու համար, պետք էր նրան մանևրել այնպես, ինչպես վտանգավից ջրահոսանքում նավավարն է մանևրում իր դյուրաբեկ նավակը:

Այնուհետև հասավ մահվան օրը: Այս պերճափայլ և սկեպտիկ անձնավորությունը, որի միայն բանականությունն էր կենդանի, — այնքան սոսկալի էր քայքայումը, — իրեն գտավ իր երկու հակակրած մարդկանց՝ բժշկի և խոստովանահոր միջև... Բայց նա նրանց հետ եղավ զվարթամիտ: Չե՞ որ իր համար փողփողուն մի լույս կար ապագայի քողի հետևը: Եվ, այդ թափանցիկ, շղարշային բեմի վրա ստվերների պես խաղում էին երիտասարդության հեշտաբույր և զզվիչ վայելքները:

Ամռան գեղեցիկ երեկո էր, երբ դոն Ժուանն զգաց մոտալուտ մահը: Իսպանիայի երկինքը զմայլելիորեն հստակ էր. նարնջենիների բույրը սփռված էր օդում. աստղերը ծորում էին իրենց պայծառ և զովաշունչ շողքը. թվում էր, որ բնությունը նրան տալիս է ստույգ առհավատյալ, թե պետք է նա վերակենդանանա: Բարեպաշտ և հնազանդ մի զավակ դիտում էր նրան՝ գորովագին և հարգալից: Ժամի տասնմեկի մոտերքը հայրը ցանկացավ մենակ մնալ այդ անբիծ էակի հետ:

— Ֆիլի՛պ..., — ասաց նա այնպիսի քնքուշ և սիրալիր մի ձայնով, որ երիտասարդը ցնցվեց և երջանկությունից լաց եղավ, որովհետև այդ անդրդվելի հայրը երբեք այդ շեշտով Ֆիլիպ չէր արտասանել: — Լսիր ինձ, որդի՛, — նորից խոսեց մահամերձը: — Ես մի մեծ մեղապարտ եմ: Դրա համար էլ իմ ամբողջ կյանքի ընթացքում ես մտածել եմ իմ մահվան մասին: Հին ժամանակ ես մեծանուն պապ Հուլիոս II-ի Բարեկամն եմ եղել: Այդ վեհափառ հայրապետը, վախենալով, որ իմ զգայարանների չափազանց գրգռվածությունն ինձ գործել կտար որևէ մահացու մեղք սուրբ մեռնող ընդունելու պահից մինչև վերջին շունչս փչելու վայրկյանը, ինձ նվիրեց մի սրվակ, որի մեջ գտնվում է անապատում ժայռից ցայտած սուրբ ջուրը: Ես պահեցի եկեղեցուն պատկանող այս գանձի հափշտակման գաղտնիքը. սակայն ինձ թույլատրված է այս կրոնական խորհուրդը հայտնել իմ որդուն, in articulo mortis*: Դուք այդ սրվակը կգտնեք այս գոթական սեղանի զորոցում, որը երբեք չի բաժանվել իմ սնարից... Այդ թանկագին բյուրեղը դուք դեռ կարող եք օգտագործել, իմ սիրասուն Ֆիլիպս... Բայց երդվեցեք ինձ, հանուն ձեր հոգու հավիտենական փրկության, որ դուք կետ առ կետ պիտի գործադրեք իմ հրամանները...

Ֆիլիպը նայեց հորը: Դոն Ժուանը ընդունակ էր գատորոշել մարդկային զգացմունքների արտահայտությունները և կարող էր հանգիստ մեռնել, մինչդեռ նրա հայրը մեռավ հուսահատության մեջ, իր որդու նայվածքից հասկանալով, որ նրան չի կարելի վստահել:

— Դու արժանի էիր ուրիշ հայր ունենալու, — շարունակեց դոն Ժուանը, — ես համարձակվում եմ քեզ խոստովանել, զավակս, որ այն պահին, երբ Սուրբ-Լուկարի հարգարժան աբբահայրն ինձ տալիս էր վերջին սուրբ հաղորդությունը, ես մտածում էի անհամատեղելիության մասին, ինչպես սատանայի և աստծու զորություններն են...

— Օ՛հ, հայր իմ:

— Եվ ես ինձ ասում էի, որ երբ սատանան իր դաշինքը կնքի աստծու հետ, ապա նա ամենաստոր հոգին կլինեք, եթե որպես պայման չպահանջեք իր կուսակիցների մեղքերի թողությունը: Այս միտքն ինձ հալածում էր: Նշանակում է, ես դժոխք պետք է գնամ, տեսնում ես, զավակս, եթե դու չկատարես իմ կամքը...

— Օ՛հ, շուտ ասացեք ինձ, հայր իմ:

— Հենց որ ես փակեմ աչքերս, — շարունակեց դոն Ժուանը, — գուցե մի քանի բռպե հետո, դու կվերցնես իմ մարմինը, նույնիսկ տաք-տաք և այն կպառկեցնես այս սեղանի վրա, սենյակի մեջտեղում: Հետո դու կհանգցնես այս լամպը. որովհետև աստղերի ցուլը պետք է բավարարի քեզ... Դու կմերկացնես ինձ՝ հանելով իմ բոլոր շորերը, և, երբ **հայրմերներ և ողջուն քեզ Մարիամներ** կասես՝ հոգով դեպի աստված վերանալով, դու այդ սուրբ ջրով խնամքով կշփես աչքերս, շրթունքներս, նախ ամբողջ գլուխս և հաջորդաբար՝ անդամներս և ամբողջ մարմինս: Բայց, սիրելի զավակս, աստծու զորությունը այնքան մեծ է, որ ոչ մի բանից չպետք է զարմանաս...

Այստեղ դոն Ժուանը, զգալով մոտալուտ մահը, ավելացրեց ահարկու ձայնով.

* Մահվան պահին (լատ.):

— Եվ պինդ պահիր սրվակը...

Նա մեղմիկ փչեց իր շունչը որդու թևերի մեջ, որի հորդառատ արցունքները հոսեցին նրա ծաղրալից և գունաթափ դեմքի վրա:

Մոտավորապես կեսգիշեր կլիներ, երբ դոն Ֆիլիպ Բելվիդերոն տեղավորեց հոր դիակը սեղանի վրա, և համբուրելուց հետո նրա սպառնալից ճակատն ու գորշագույն մազերը, հանգցրեց լամպը: Պայծառ լուսնից ծորող թեթև լույսը, որի ցուլքերը անհեթեթորեն լուսավորում էին դաշտավայրը, թույլ տվեց բարեպաշտ Ֆիլիպին տարտամորեն ընդնշմարել հոր մարմինը. դա ստվերի մեջ սպիտակին տվող ինչ-որ մի բան էր: Երիտասարդը մի լաթ թաթախեց հեղուկի մեջ: Հետո աղոթքի մեջ խորասուզված, խորունկ լռության մեջ, նա հավատարմորեն օծեց այդ սրբազան գլուխը: Նա անշուշտ լսում էր ինչ-որ աննկարագրելի շրշյուններ, բայց նա դրանք վերագրում էր ծառերի կատարներին խաղացող գեփյուռին: Երբ արդեն թրջել էր աջ թևը, նա զգաց, որ մի մատղաշ և ուժեղ բազուկ սեղմում է իր վիզը. դա հոր բազուկն էր... Նա աղեկտուր մի ճիչ արձակեց, սրվակն ընկավ ձեռքից և փշրվեց, հեղուկը գոլորշիացավ: Դոյակի բոլոր սպասավորները, ջահերը ձեռներին, ներս թափվեցին: Այդ ճիչը նրանց ահաբեկել էր և զարմացրել, կարծես վերջին դատաստանի շեփորը ցնցած լիներ տիեզերքը: Մի բռնակում սենյակը լցվեց մարդկանցով: Դոդահար բազմությունը նշմարեց դոն Ֆիլիպին, ուշաթափված, բայց որին պահում էր հոր հուժկու բազուկը, ուժգին սեղմելով նրա վիզը... Ապա, նրանց առաջ պարզվեց ինչ-որ գերբնական մի երևույթ. ներկաները տեսան դոն Ժուանի գլուխը, այնքան երիտասարդ և այնքան գեղեցիկ, ինչքան Անտինոուսի գլուխը, սև մազերով, վառվռուն աչքերով, կարմրագեղ շրթունքներով. և այդ գլուխը տատանվում էր սարսափելիորեն՝ առանց կարողանալու տեղից շարժել կմախքը, որին նա պատկանում էր:

Մի տխմար ծեր սպասավոր գոչեց.

— Հրա՛շք...

Բոլոր այդ սնոտիապաշտ իսպանացիները կրկնեցին.

— Հրա՛շք...

Դոնա Էլվիրան, որը չափից դուրս բարեպաշտ էր և չէր կարող ընդունել կախարդանքի խորհուրդները, կանչել տվեց Մուրբ-Լուկարի աբբահորը:

Երբ քահանան իր աչքերով տեսավ հրաշքը, նա որոշեց դրանից օգուտ քաղել, և որպես հնարամիտ մարդ, և որպես վանահայր, նրա ցանկությունն էր իր վանքի եկամուտներն ավելացնել: Հայտարարելով, անմիջապես, թե սինյոր դոն Ժուանն ստույգ կսրբացվի, նա հաջորդ չէ մյուս օրվա համար նշանակեց սրբացման հանդիսավոր արարողություններ, որոնք պետք է կատարվեին իր վանքում, որն այսուհետև պիտի կոչվեր,— ասաց նա,— Մուրբ-Ժուան-դը-Լուկար...

Այս խոսքերը լսելով՝ գլուխը մի բավականին զվարճալի ծամածռություն արեց:

Այսօրինակ հանդիսավորությունների հանդեպ իսպանացիների ճաշակն այնքան է հանրահայտ, որ դժվար չի լինի հավատալ կրոնական այն շքեղություններին, որոնցով Մուրբ-Լուկարի վանքը նշանավորեց **երանելի դոն Ժուան Բելվիդերոյի** փոխադրումը եկեղեցի: Այս մեծանուն ազնվապետի մահից երեք օր հետո, նրա կիսակատար հարության հրաշքի մասին համառ զրույց էր անցնում գյուղից քաղաք, Մուրբ-Լուկարի շուրջը առավել քան հիսուն մղոն շառավղի վրա տարածվող ամբողջ շրջակայքում. արդեն իսկ ծիծաղաշարժ տեսարան էր պարզում հետաքրքրասեր

մարդկանց շարանը ճանապարհների վրա: Նրանք եկան բոլոր կողմերից, հրապուրված՝ ջահերի պերճափայլ ուղեկցությամբ երգված **«Հրաշափառով»**:

Սուրբ-Լուկար վանքի վաղեմի մզկիթը, մավրիտանացիների կողմից կերտված հրաշալի մի կառույց, որի գմբեթները երեք դար է, ինչ լսում էին Ալլահի անվան փոխարինած Հիսուս Քրիստոսի անունը, չկարողացավ բովանդակել հանդիսավոր արարողությունը տեսնելու համար այնտեղ շտապած մարդկանց խումներում ամբոխը: Ազնվագարմ հիդալգոներ, մրջյունների պես իրար սեղմված, հագին թավշյա թիկնոց, զինված իրենց շքեղ սուսերներով, կանգնած էին մնում սյուների շուրջը՝ չունենալով այլ տեղ ծալելու իրենց ծնկները, որոնք միայն այնտեղ էին ծալվում: Այնտեղ կային չքնաղ գեղջկուհիներ, որոնց գունագարդ շրջագգեստները գծագրում էին նրանց հրապուրիչ ձևերը. ծերունիներ՝ ճերմակ մազերով, երիտասարդներ՝ հրացայտ աչքերով, պճնված պառավ կանայք, ապա՝ բերկրանքից թրթռուն գույգեր. նոր նշանված հետաքրքրասեր աղջիկներ՝ իրենց փեսացուների հետ եկած. նորապսակ հարսեր, իրար ձեռքից բռնած երկչոտ երեխաներ:

Այդ բազմությունն այնտեղ էր, շքեղորեն պաճուճված, այլազան գույներով փողփողուն, ծաղիկներով բեռնավորված, գուգված-գարդարված և մեղմիկ աղմկելով գիշերվա լռության մեջ:

Եկեղեցու լայն դռները բացվեցին: Նրանք, ովքեր ուշացած լինելով մնացին դրսում, հեռվից, քանդակագարդ երեք դռների միջով տեսնում էին մի այնպիսի թատերաբեմ, որի մասին մեր արդիական օպերաների պերճափայլ զարդարանքները մի թույլ գաղափար անգամ չէին կարող տալ: Բարեպաշտ կանայք և մեղավոր մարդիկ, փութալով սիրաշահել նոր սրբին, այդ ընդարձակ եկեղեցում վառել էին հազարավոր մոմեր, որոնց քաղցրաշող ցուլքը կախարդական տեսք էր տալիս մոնումենտալ շենքին: Սև կամարակալները, սյուներն ու դրանց խոյակները, ոսկով և արծաթով շողշողուն խորակառույց մատուռները, նրբանցքները, մավրիտանական արվեստի ժանեկաշիյուս զարդաքանդակների ամենանուրբ մոտիվները ուրվագծվում էին այս հորդառատ լույսի մեջ, ինչպես բորբոքված խարույկի մեջ առաջացած քմածին ֆիգուրներ: Դա հրեղեն օվկիան էր: Այդ օվկիանի վրա, եկեղեցու խորքում, իշխում էր ոսկեհուռ դասը, ուր և բարձրանում էր մայր-խորանը, որը իր բոցավառ տեսքով կարող էր մրցել նորածագ արևի հետ: Եվ իրոք՝ ոսկե լամպերի, արծաթյա աշտանակների, խաչվառների, ծոպերի, սրբապատկերների և ex voto-ների շողքը գունաթափվում էր այն տապանի փայլից, որի մեջ գտնվում էր դոն Ժուանը: Ամբարիշտի մարմինը հուրհրատում էր ակնեղեններով, ծաղիկներով, ադամանդներով, ոսկով, փետրագարդերով՝ այնքան ճերմակ, ինչքան սերովբեների թներն են, և խորանի վրա գրավում էր այն տեղը, ուր Քրիստոսի նկարն էր: Նրա շուրջը փայլիլում էին բազմաթիվ մոմեր, որոնք օդն էին նետում իրենց լույսի վետվետուն ծփանքները:

Սուրբ Լուկարի շքեղափայլ վանահայրը, պաճուճված իր հայրապետական հագուստներով, գոհարագարդ խույրով, շուրջառով, վարդապետական ոսկե գավազանով, գահակալում էր, որպես խորանի արքա, պերճաշուք, կայսերական մի բազկաթոռի վրա: Նրբահյուս, սպիտակ շապիկներով, անկիրք դեմքով արծաթահեր ծերունիներ, վանքի ամբողջ հոգևորականությունը շրջապատում էին նրան, նման խոստովանվող սրբերի՝ որոնցով նկարիչները շրջապատում են հավիտենական հոր պատկերը: Դասապետը և հոգևորական ժողովի աստիճանավորներն իրենց եկեղեցական սնափառության նշաններով զարդարված, գնում գալիս էին խնկի արձակած ամպերի ծփանքում, ինչպես երկնականարի վրա թավալվող աստղեր:

Երբ հասավ փառաբանության պահը, զանգերի դողանջներն արթնացրին դաշտավայրի ողջ արձագանքները և այս ծովածավալ բազմությունը առ աստված արձակեց գոհաբանության առաջին

* Ընծայնաբերումներ (լատ.):

Ճիշդ, որով սկսում է **Հրաշափառը**: Ինչպիսի՜ վեհություն կար այդ ճիշի մեջ: Ինչպիսի՜ հստակ և քաղցրալուր ձայներ էին, հոգեզմայլված կանանց ձայներ, միախառնված՝ տղամարդկանց ծանր և ուժեղ ձայնին, բյուրավոր ձայներ՝ այնքան հզոր, որ երգեհոնը չկարողացավ իշխել այդ անսամբլին, հակառակ իր խողովակների ահեղ թնոյունին... Երգչախումբը կազմող փոքրիկ դպիրների մատղաշ ձայների սուրբ հնչյունները և մի քանի թավ ձայների լայնածավալ բացականչությունները միայն, հարուցելով սրտառուչ պատկերացումներ, այս մարդկային ձայների հոգեզմայլ համերգի մեջ հիշեցրին մանկության և ուժի մասին, միախառնվելով սիրո միակ զգացմունքի մեջ:

— Ըզբեզ, աստված, գովաբանեմք:

Ծնրադիր կանանց և տղամարդկանց բազմությամբ սևացած տաճարի ծոցից դուրս էր խոյանում այդ շարականը, նման այն լույսի, որը հանկարծ փայլատակում է գիշերվա խավարի մեջ, և լռությունը խզվեց կարծես ամպերի որոտով: Ձայները բարձրացան խնկի ամպերի հետ, որոնք այդ միջոցին շղարշային և կապտավուն քողեր էին գցում ճարտարապետության ֆանտաստիկական հրաշալիքների վրա: Ամեն ինչ ճոխություն էր, պերճանք, բուրմունք, լույս և մելոդիա:

Այն պահին, երբ սիրո և երախտագիտության այդ երգեցողությունը սլացավ դեպի խորանը, դոն Ժուանը, որը չափազանց բարեկիրթ էր, և չէր կարող շնորհակալություն չհայտնել և չափազանց սրամիտ՝ որպեսզի հասկանար այդ կատակը, պատասխանեց մի զարհուրեցնող քրքիջով և հրճվանքից խայտաց իր դագաղի մեջ:

Բայց շուտով սատանան նրան միտք ներշնչեց, որ ինքը կարող էր հասարակ մահկանացու դառնալու վտանգի առաջ կանգնել՝ լինել ինչ-որ մի սուրբ, մի Բոնիֆաս կամ մի Պանտալեոն: Այնժամ նա մոնչաց. և այդ սիրո մեղեդուն խառնեց ահեղ մի ոռնոց, որին միախառնվեցին դժոխքի բյուրավոր ձայները: Երկիրը օրհնում էր, երկինքը անիծում:

Եկեղեցին ցնցվեց իր վաղեմի հիմքերի վրա: **«Զբեզ, աստված, գովաբանեմք»**,— ասում էին ներկաները:

— Կորե՛ք գրողի ծոցը, անբան անասուններ:— Աստվա՛ծ, աստվա՛ծ. Corajos demonios*, անասուններ, դուք բոլորդ տխմար եք ձեր գառամ աստծու հետ:

Եվ լուտանքների մի հեղեղ հորդեց, ինչպես լավան է հոսում Վեգուվի ժայթքման ժամանակ:

— Սաբաովդ աստված... Սաբաովդ,— բացականչում էին հավատացյալները:

— Դուք դժոխքի վեհությունն եք պղծում,— պատասխանեց դոն Ժուանը, որը կրճտացնում էր իր ատամները:

* Իսպանական հայիոյանք:

Քիչ հետո, կենդանի բազուկը կարողացավ դուրս գալ դագաղի վերնից, և, բռնեցնելով սպառնալով հավաքույթին, հուսահատության և հեգնանքի շարժումներ կատարեց:

— Սուրբն ինչպե՛ս է մեզ օրհնում,— ասացին պառավ կանայք, երեխաներն ու հարսնացուները, դյուրահավատ մարդիկ:

* Հիմար (իտալ.):

Ահա թե ինչպես մենք հաճախ մոլորվում ենք մեր երկրպագության առարկայի նկատմամբ:
Ականավոր մարդը ծաղրում է նրանց, ովքեր իր գովքն են հյուսում:

Այն րուպեին, երբ աբբահայրը խորանի առջև ծնկաչոք երգում էր.

— Սուրբ Հովհան, բարեխոսյա...

Նա բավականին որոշակիորեն լսեց.— O coglione*:

— Բայց, այդ ի՞նչ է կատարվում վերևում,— բացականչեց փոխ-վանահայրը, տեսնելով, որ դագաղը ցնցվում է:

— Սուրբը սատանի նման չարանում է,— պատասխանեց վանահայրը:

Այն ժամանակ այդ կենդանի գլուխը ուժգին պոկ եկավ մարմնից, որն այլևս չէր ապրում և ընկավ պատարագիչ աբբահոր դեղնավուն գանգի վրա:

— Հիշիր դոննա Էլվիրային... — գոռաց նա, խածելով աբբահոր գլուխը:

Աբբահայրը մի սոսկալի ճիչ արձակեց, որը խանգարեց հանդիսավոր արարողությունը: Բոլոր եկեղեցականները խուճապահար փախան:

— Հիմա՛ր, դե՛ ասա, թե աստված կա... — գոռաց ձայնը այն րուպեին, երբ աբբահայրը, խածված ուղեղով, վերջին շունչն էր փչում:

ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՀՅՈՒԹՇ

«Երկարակեցության կենսահյուրը» պատմվածքն առաջին անգամ լույս է տեսել 1830 թվականի հոկտեմբերին, «Ռևյու դը Փարի» ժուռնալում: 1846 թվականին հեղինակն այն զետեղում է «Մարդկային կատակերգության» XV հատորում («Փիլիսոփայական էտյուդներ», I հատոր):

Ֆանտաստիկական պատմությունը երկարակեցության հրաշագործ կենսահյուրի մասին, որին տիրացել էր հարուստ անառակը, Բալզակի գրչի տակ ստանում է հեգնական, սուր հակակեղեցական բնույթ:

Պատմվածքի հերոս դոն Ժուան Բելվիդերոն թե՛ իր անունով և թե՛ իր բնորոշ գծերով մոտենում է լեգենդարային դոն Ժուանին: Բայց Բալզակը նոր իմաստավորում է տալիս այդ կերպարին: Նրա դոն Ժուանը անգուսպ է իր քմայքների բավարարման մեջ, միաժամանակ շահամոլ է, հաշվենկատ և կեղծավոր: Իր մեղքերի համար, ի հակադրություն լեգենդարային դոն Ժուանի, նա ոչ մի պատիժ չի ստանում, ընդհակառակը, եկեղեցին մեծարում է նրան, սրբերի կարգը դասում: Նողկալի լուտանքները և աստվածահայտությունը, որ դուրս են ժայթքում կենսահյուրից վերակենդանացած նրա գլխից, ամբոխն ընդունում է որպես աստվածային հայտնություն:

¹ «...Դիմանշի հետ ունեցած տեսարանում» — տե՛ս «Գոբսելի» N 6 ծանոթագրությունը:

² **Մարշալ դը Ռիշելյո** — Լուի-Ֆրանսուա-Արման (1696—1781) — ֆրանսիական քաղաքական և ռազմական գործիչ ռեգենտության ժամանակ և Լուդովիկոս XV-ի թագավորության շրջանում։ Հայտնի էր իր սիրային արկածներով ու անառակությամբ։